Հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Երվանդ Մանվելի Հակոբյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի 04-053-0016-0006 ծածկագրի տակ գտնվող հողամասումառանց համապատասխան թույլտվության կատարել է ինքնակամ շինարարական աշխատանքներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, Խոյի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի փետրվարի 12-ին անցկացվել է լուծմը, ինչի կապակցությամբ Երվանդ Մանվելի Հակոբյանը պատշաճ ծանուցվել է՝ /Հայփոստ ՓԲԸ, ստացականի կոդ LO126432619AM/ ծանուցումը ստացել և ներկայացել է վարչական վարույթի լուծմանը:

Երվանդ Մանվելի Հակոբյանը /նույնականացման քարտ՝ 016340838, տրված՝ 2024 թվականի օգոստոսի 1-ին, 057-ի կողմից/ վարչական վարույթի լուծման ժամանակ հայտարարեց, որ ծանուցումը ստանալուց հետո կասեցրել է շինարարական աշխատանքները, մեկամսյա ժամկետ խնդրել փաստաթղթերի ձևակերպման աշխատանքները կազմակերպելու համար, պատշաճ ձևով դիմել է համայնքապետարան և ստացել համապատասխան թույլտվություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի անկեղծ զղջումը, իրավախախտման հետևանքները կանխելը, ինչպես նաև հիմք ընդունելով Խոյի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից կատարված տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

կանխարգելում ու կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

- 1) մեղավորի անկեղծ զղջումը.
- 2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ և 154-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Երվանդ Մանվելի Հակոբյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 12
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մարտի 2025 թվականի N 259-Ա

ՄՈԼՈՏ ՎԱՐԴԱՆԻ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 02/25 վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Գայի փողոց 18 տուն հասցեի բնակիչ՝ Մոլոտ Վարդանի Փանոսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Հարավային 5-րդ փողոց 4 հասցեում 04-006-0090-0003 ծածկագրի տակ գտնվող հողամասում սառնարանային տնտեսությունը և ջերմային տնտեսությունը առանց շահագործման թույլտվության շահագործելու մասին, **պարզեց, որ.**

Մոլոտ Վարդանի Փանոսյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում /առանց շահագործման թույլտվության շահագործել է սառնարանային և ջերմային տնտեսություններ/, ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 31-ին կազմված արձանագրության, տեղազննության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2025 թվականի փետրվարի 3-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 34-րդ հոդվածների հիմքով վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմը՝ այսուհետ անձնակազմ, **հրավիրել է** վարչական վարույթի լուծ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- Խոյի համայնքապետարանի աշխատակազմը վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 31-ին կազմված արձանագրությունը և տեղազննության ակտը:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
- 2025 թվականի փետրվարի 12-ին և փետրվարի 28-ին վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ արձանագրությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Մոլոտ Վարդանի Փանոսյանը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Հարավային 5-րդ փողոց 4 հասցեում գտնվող, 04-006-0090-0003 ծածկագրի տակ գտնվող հողամասում առանց շահագործման թույլտվության շահագործել է սառնարանային տնտեսությունը և ջերմային տնտեսությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Խոյի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի փետրվարի 28-ին անցկացվել է լուծմը, որին Մոլոտ Վարդանի Փանոսյանը պատշաճ ներկայացել է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ապացուցված կարելի է համարել, որ Մոլոտ Վարդանի Փանոսյանի կողմից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

Արդյունքում Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում լուծման իրականացնող հանձնաժողովը առաջարկեց Խոյ համայնքի ղեկավարին՝ Մոլոտ Վարդանի Փանոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք՝ 500000 /հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում ձևակերպում է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրում է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի՝ ավարտված շինարարական օբյեկտի շահագործումը թույլատրվում է միայն շահագործման թույլտվությունը ձևակերպելուց հետո:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարությունն ավարտված շենքերը կամ շինություններն առանց շահագործման թույլտվության ձևակերպման շահագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև յոթհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Մոլոտ Վարդանի Փանոսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ 500000 /հինգ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության **900325188150** հաշվեհամարին:

3. Սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կառուցապատողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ և 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 12
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մարտի 2025 թվականի N 260-Ա

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանի կողմից 2025 թվականի մարտի 12-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանին տալ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 12
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մարտի 2025 թվականի N 261-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանի կողմից 2025 թվականի մարտի 12-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանին տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ 2025 թվականի I-ին եռամսյակի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 12
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2025 թվականի N 262-Ա

ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արմեն Աբգարյանի կողմից 2025 թվականի մարտի 10-ին ներկայացրած հայտը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ 2025 թվականի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 13
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2025 թվականի N 263-Ա

ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արմեն Աբգարյանի կողմից 2025 թվականի մարտի 10-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տալ սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ 2025 թվականի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 13
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2025 թվականի N 264-Ա

ՀԵՂՈՒԿԱՅՎԱԾ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արմեն Աբգարյանի կողմից 2025 թվականի մարտի 11-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տալ հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն՝ 2025 թվականի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 13
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2025 թվականի N 265-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արմեն Առաքելյանի կողմից 2025 թվականի մարտի 13-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արմեն Առաքելյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2025 թվականի I-ին եռամսյակի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 14
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2025 թվականի N 266-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1260-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 218-Ա որոշումը, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշման 30-րդ, 31-րդ, 34-րդ, 39-րդ, 42-րդ և 46-րդ կետերի, ինչպես նաև համայնքի բնակավայրերում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովումն իրականացնելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով, բնակչության տարահանման (ընդունման) հավաքակալաններ, ժամանակավոր տեղակայման կետեր ստեղծելու և տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1260-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ 1-ին և 3-րդ կետերով հաստատված հավելված 1-ը և հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի և 3-ի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մարտի 14

Խոյ համայնք, գ. Գեղակերտ

Հավելված 1.
ՀՀ Արմավիրի մարզի հայ համայնքի ղեկավարի
2025թ. Մարտի <<14>> - ի թիվ Ա որոշման

ՀՀ Արմավիրի մարզի հայ համայնքի ղեկավարի
2023թ. դեկտեմբերի <<22>> - ի թիվ 1260-Ա որոշման

Կ Ա Ջ Մ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վարազդատ Անտոնյան - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի հայ համայնքի ղեկավարի տեղակալ

Նորիկ Նահապետյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Հայաստանի
Հանրապետության Արմավիրի մարզի հայ համայնքապետարանի աշխատակազմի
Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի
պետի տեղակալ

Գրապիոն Շառոյան - հանձնաժողովի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի հայ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար:

Հանձնաժողովի անդամներ՝

Արմեն Կամավոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հայ համայնքի
ղեկավարի օգնական

Գասպար Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հայ
համայնքի ղեկավարի օգնական

Սարգիս Խանոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հայ համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության և առողջապահության
հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Վանինե Մկրտչյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հայ համայնքի ղեկավարի օգնական

համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ

Ջավահիր Ամիրխանյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էսոյ համայնքի ղեկավարի խորհրդական

Մարիամ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի էսոյի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ծառայության խմբի ներկայացուցիչ:>>

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ. ՇԱՌՈՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Արմավիրի մարզի հող համայնքի ղեկավարի
2025թ. մարտի <<14>> - ի թիվ - Ա որոշման



ՀՀ Արմավիրի մարզի հող համայնքի ղեկավարի
2023թ. դեկտեմբերի <<22>> - ի թիվ 1260-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՕՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԵՐԻ

1. Տարահանվող բնակչության հավաքի, հաշվառման և տրանսպորտային միջոցներ նստեցման խումբ.

Խմբի ղեկավար՝

Լյուդվիկ Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ

Խմբի անդամներ՝

Հռիփսիմե Ավագյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային մուտքերի ապահովման բաժնի առաջատար մասագետ

Ասյա Նավասարդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ

2. Տարահանման ենթակա նյութական և մշակութային արժեքների հաշվառման ու բարձման կազմակերպման խումբ.

Խմբի ղեկավար՝

Ազատ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային մուտքերի ապահովման բաժնի հետ

Խմբի անդամներ՝

Ռիմա Մակարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի

գլխավոր մասնագետ

Արմինե Համբարձումյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ

3. Տարահանման երթուղիներում տարահանման էշելոնների, ավտոշարասյունների կազմավորումների ուղեկցող խումբ

Խմբի ղեկավար՝

Արարատ Մուսայելյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասագետ

Խմբի անդամներ՝

Վարազդատ Համբարձումյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային մուտքերի ապահովման բաժնի առաջատար մասագետ

Արևիկ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային մուտքերի ապահովման բաժնի առաջատար մասագետ:»

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ. ՇԱՌՈՅԱՆ